տոնավաճառին, որտեղ Գավառի գործատուները ներկայացրել են են իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերը, իսկ աշխատանք փնտրող անձինք հնարավորություն ընձեռել դիմելու տվյալ թափուր աշխատատեղերի համար, ինչպես նաև ձևավորել նոր համագործակցային կապեր:Զուգահեռ աշխատանաքի տոնավաճառին անցկացվել են պանելային քննարկում և մոտիվացիոն ելույթներ, Գավառում աշխատաքային հնարավորությունների և բացերի մասին:

<u>**Հանդիպում ծրագրի շահառու երեխաների ծնողների, ընտանիքի անդամների հետ:**</u> Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի թիմը իրականացրլ է **5** հանդիպում: Շահառուների համար կազմակերպվել են արտագնա ճանաչողական և ուսմնական այցեր, ճամբարներ, փառատոններ, որոնց կազմակերպչական հարցերի, օրակարգի ներկայացման և երեխաների ծնողների համաձայնությունը ստանալու համար կենտրոնի մասնագիտական թիմի կողմից իրականացվել են տեղեկատվական հանդիպումներ: Ծրագրի շահառու ծնողների հետ իրեկանացվել հեն տեղեկատվական հանդիպումներ հետևյալ թեմաների շուրջ՝

- Շիրակի մարզի Թորոսգյուղում կազմակերպվող եռօրյա ճամբարի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **3** ծնողի հետ: Ճամբարին մասնակցել է 4 երեխա, որից 2 տղա, 2 աղջիկ: 1 ընտանիքից մասնակցել են 2 երեխա:
- Դեպի Երևան, Սիթիզնում կազմակերպվող ուսուցողական այցի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **22 / 21 մայր 1 հայր/** ծնողի հետ:
- Դեպի Ստեփանավան, Դենդրոպարկ, էքստրիմ պարկ կազմակերպվող ուսուցողական այցի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է 22 ծնողի հետ:
- Դեպի Ալավերդի կազմակերպվող սոցիալ-հոգեբանական փառատոնի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **6** ծնողի հետ:
- Սևանի ափին կազմակերպված մեկօրյա ճամբարի վերեբերյալ տեղեկատվական հանդիպումը իրականացվել է **14** ծնողի /մայր/ հետ:

<u>**Հանդիպում ծրագրի շահառու երեխաների հետ:**</u> <<Ընկերասիրություն>> թեմայով հանդիմանը ներկա են գտնվել **15** շահառու՝ **7** աղջիկ, **8** տղա: Հանդիպման սկզբում իրականացվել է մտագրոհ մեթոդը, որի ընթացքում շահառուները ներկայացրել են ինչ են հասկանում ընկերասիրություն ասելով, շեշտադրելով ինչպիսի ընկերներ են իրենք իրական կյանքում: Քննարկվել է թե ինչպիսի ընկերներ կուզենային ունենալ, ով է իրենց համար իրական ընկերը: Հանդիպման ընթացքում իրականացվել է նաև առակների ընթերցում և քննարկում:

<u>**Անհատական սոցիական խորհրդատվություն**</u> իրականացվել է <u>**101 երեխաների հետ:**</u> Կենտրոնի երեք սոցիալական աշխատողները իրականացրել են անհատական խորհրդատվություն շահառու երեխաների շրջանում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **37** շահառուի, որից **19** աղջիկ, **18** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում Փոքրիկ Իշխան կենտրոն է ըդգրկվել **5** շահառու երեխա/ **1** աղջիկ, **4** տղա/: Նոր ընդգրկված **5** շահառու երեխայի հետ անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել կարիքների գնահատմանը, որի ընթացքում դիտարկվել է երեխաների հուզակամային վիճակը, զարգացման մակարդակի համապատասխանությունը տարիքին և սեռին, ուսման, հաղորդակցման, սոցիալական կապերի ձևավորման ունակությունները, կրթական մակարդակի համապատասխանությունը